https://doi.org/10.46991/S&L/2022.93.012

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԿՈՆՎԵՐԳԵՆՑԻԱՅԻ ԱՐԴԻ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ (տեսահիրավական վերլուծություն)

Արմեն Ասատրյան
ԵՊՀ պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի դոցենտ, իրավաբանական գիտությունների թեկնածու

Կոնվերգենցիան արևմտյան հասարակական գիտության հասկացություններից է, որը սոցիալական զարգացման որոշիչ առանձնահատկություն է համարում սոցիալ-քաղաքական համակարգերը միմյանց մոտեցնելու, կապիտալիզմի և սոցիալիզմի տնտեսական, քաղաքական և գաղափարական տարբերությունները հարթելու միտումը՝ հետապնդելով դրանց հետագա միաձուլման նպատակը[1]:

Կոնվերգենցիայի տեսությունը իր գոյության ընթացքում որոշակի զարգացում է ապրել: Սկզբնական շրջանում փորձ էր արվում ապացուցել կապիտալիստական և սոցիալիստական զարգացած երկրների միջև տնտեսական կապեր ձևավորելու, իսկ հետագայում այդ երկրների հարաբերությունների նմանությունների անխուսափելիությունը արվեստի, մշակույթի կրթության և այլ ոլորտներում: Կոնվերգենցիայի իրավական ասպեկտն առավելապես քննարկվում էր համեմատական ուսումնասիրության հարթությունում:

Իրավունքի տեսության մեջ խնդրին անդրադարձել է ռուս հայտնի իրավաբան Ս. Ս. Ալեքսեևը, ով իր համասոցիալական խնդիրներին նվիրված աշխատություններից մեկում քննարկել է իրավական կոնվերգենցիան՝ համարելով այն ժամանակակից իրավական համակարգերի մերձեցում[2]:

Ինչ վերաբերում է իրավաբանական կոնվերգենցիայի մեխանիզմի դիտարկմանը, ապա այն ի սկզբանե ենթադրում է որոշակի համակարգային մոտեցում, հետևաբար՝ խնդրի այս ասպեկտով ուսումնասիրությունը իր հերթին պահանջում է համակարգային մոտեցման անհրաժեշտություն, այսինքն՝ ուսումնասիրվող օբյեկտի դիտարկում տարրերի, նրանց միջև եղած հարաբերությունների և կապերի ամբողջական բազմության մեջ, որը լրացվում է կառուցվածքային, գործառութային, ինչպես նաև պատմական մեթոդներով:

Իրավաբանական գիտելիքների զարգացման ներկա փուլը ենթադրում է, որ իրավական համակարգերի զարգացման շատ առանձնահատկություններ չեն կարող համարժեք բացատրվել՝ առանց իրավաբանական գիտության համար էքսպանսիայի նոր հայեցակարգի ներդրման:

Իրավական կոնվերգենցիայի մեխանիզմի համակարգային մոտեցումը թույլ է տալիս, մի կողմից, որոշել համասեռ իրավական ազդեցության մեխանիզմի կառուցվածքը, մյուս կողմից՝ բացահայտել օրենսդրական նորմերի, ի-

[1] Տե՛ս Большой энциклопедический словарь, http://edukation.kulichki.net/dic/12j.html
[2] Տե՛ս **Алексеев С. С.** Избранное: Наука права. Общесоциальные проблемы. Публицистика. М., 2003, էջ 119:

ռավակիրառ պրակտիկայի, իրավական արժեքների առանձնահատկությունները նոր իրավական միջավայրում:

Ընդհանուր առմամբ մեխանիզմը որոշակի համակարգ է, և ուսումնասիրելով իրավական կոնվերգենցիայի մեխանիզմը՝ պետք է անդրադառնալ բովանդակությամբ նմանատիպ այնպիսի երևույթների, ինչպիսիք են «իրավունքի գործողության մեխանիզմը» և «իրավական կարգավորման մեխանիզմը»:

«Իրավունքի գործողության մեխանիզմ» տերմինը ունի հասկացությունների բավականին ճյուղավորված մեկնաբանություն, որի վերաբերյալ տեսությունները արտացոլում են բովանդակությամբ և ծավալով միմյանցից տարբերվող երևույթներ:

Վ.Ա. Լենչիկի կարծիքով՝ «իրավունքի գործողության մեխանիզմի» մեջ ներառված գործոնները փոխկապակցված, փոխպայմանավորված են և համարվում են համակարգային կազմավորումներ[1], ուստի այն կարող է սահմանվել որպես միասնության մեջ վերցված հանգամանքների և երևույթների ամբողջություն, որոնք նպաստում են իրավական հարաբերությունների հաստատմանը, փոփոխմանը և դադարեցմանը:

Վ.Պ. Կազիմիրչուկը գիտական շրջանառության մեջ է դրել «իրավունքի գործողության սոցիալական մեխանիզմ» տերմինը, որը հեղինակը դիտարկում է նեղ և լայն իմաստներով: Նեղ իմաստով այն ներառում է իրավական կարգավորումները, իրավունքի սուբյեկտները իրական վարքի վերածելու գործընթացները: Լայն իմաստով սոցիալական մեխանիզմն ընդգրկում է բոլոր սոցիալական երևույթները, որոնք ուղեկցում են իրավական կարգավորմանը[2]:

Ընդ որում իրավունքի գործողության կառավարչական (կազմակերպչական) մեխանիզմում հեղինակը առանձնացնում է երկու ասպեկտ.

1) իրավունքի կառավարչական ազդեցությունը հասարակական հարաբերությունների վրա.

2) կառավարման ազդեցությունը իրավունքի իրացման վրա:

Վերլուծելով առաջինը՝ հեղինակը տալիս է իրավունքի գործողության կառավարչական մեխանիզմի նկարագրությունը, որտեղ խոսքը տարբեր հասարակական կառույցների, այդ թվում՝ պետական մարմինների կողմից իրավունքի օգնությամբ հասարակական հարաբերությունների վրա կառավարչական ազդեցության մասին է:

Երկրորդ դեպքում ակնարկը հետևյալն է.

1) կառավարման համակարգի ստեղծում (այս գործընթացը ներառում է նպատակների, գործառույթների, համակարգի կառուցվածքի, ուժերի և միջոցների դասավորություն),

2) համակարգի գործունեություն (տեղեկատվական և վերլուծական աշխատանք, կառավարչական որոշումների մշակում, որոշումների կատարման կազմակերպում, կատարման նկատմամբ վերահսկողության կազմակերպում, արդյունքների գնահատում, որոշումների հստակեցում),

3) կադրային աշխատանք (մասնագետների կրթություն, նրանց վերապատրաստում, պաշտոններում նշանակումներ և այլն),

---

[1] Տե՛ս **Ленчик В. А.** Механизмы действия права: автореф. дис. ... канд. юрид. наук. М., 2002. https://www.dissercat.com/content/mekhanizmy-deistviya-prava:

[2] Տե՛ս **Казимирчук В. П**. Социальный механизм действия права // Труды Института государства и права российской академии наук. М., 2002. http://www.igpran.ru/trudy/vypuski/2007/2007-4..pdf,:

4) կառավարման համակարգի արտաքին կապեր (բնակչության, այլ պետական մարմինների, հասարակական կազմակերպությունների հետ):

Նորից անդրադառնալով Վ.Ա. Լենչիկի կատարած իրավունքի գործողության համակարգային վերլուծությանը՝ կարելի է պատկերացում կազմել վերջինիս համակարգային մեխանիզմի մասին՝ ընդգրկելով բոլոր փուլերը, ինչպես նաև սոցիալական հարաբերությունների բոլոր ասպեկտները, որոնք համապատասխանաբար ազդում են իրավունքի ձևավորման, իրավաստեղծ և իրավակիրառ գործընթացների վրա: Ելնելով նշվածից՝ նպատակահարմար է խոսել ոչ թե իրավունքի գործողության առանձին կողմերի (սոցիալական, հոգեբանական), այլ ամբողջական՝ համակարգային «իրավունքի գործողության մեխանիզմի» մասին[1]:

Ինչ վերաբերում է «իրավական կարգավորման մեխանիզմ» եզրույթի բովանդակությանը, ապա այն սերտորեն կապված է «իրավունքի գործողության մեխանիզմի» հետ և, ըստ իս, կազմում է նրա մի մասը, ու չնայած «իրավական կարգավորման մեխանիզմ» հայեցակարգի և բովանդակության վերաբերյալ չկա միասնական տեսակետ, փորձենք այն վերլուծել իրավաբան տեսաբանների առաջադրած կարծիքների համատեքստում:

Դեռևս Ս.Ս. Ալեքսեևը, ով դասվում է քննարկվող խնդրի ուսումնասիրման ակունքներում կանգնած իրավագետների շարքին, «իրավական կարգավորման մեխանիզմը» սահմանում է որպես «... իրավական միջոցների ամբողջություն, որոնց օգնությամբ իրականացվում է իրավական ազդեցությունը հասարակական հարաբերությունների վրա»[2]:

Բազմաթիվ իրավագետներ «իրավական կարգավորման մեխանիզմը» բնութագրում են նույն դիրքերից, որոնցից է նաև Վ.Ն. Խրոպանյուկը, ով «իրավական կարգավորման մեխանիզմը» բնորոշում է որպես «.... իրավական միջոցների համակարգ, որոնց օգնությամբ իրականացվում է հասարակական հարաբերությունների կարգավորումը»[3]:

Ա. Վ. Մալկոն ևս «իրավական կարգավորման մեխանիզմը» դիտարկում է որպես իրավական միջոցների համակարգ, որը միաժամանակ թույլ է տալիս հետևողական և իրավաբանորեն պայքարել խոչընդոտների դեմ: Այս բնորոշմանը զուգահեռ՝ հեղինակը գտնում է, որ ցանկացած ղեկավարման նպատակը որոշակի համակարգում կարգուկանոնի հաստատումն է, ինչը, որպես կանոն, հաստատվում է առաջացող խոչընդոտների հաղթահարմամբ: Հետևաբար՝ հասարակական կառավարման ամենակարևոր գործիքը կոչված է պարզեցնելու հասարակական հարաբերությունների մի որոշակի համակարգ՝ հաղթահարելով այդ գործընթացի ժամանակ առաջացող խոչընդոտները:

Այսպիսով՝ Ա. Վ. Մալկոյի հայեցակարգին համապատասխան, «իրավական կարգավորման մեխանիզմը» իրավական միջոցների համակարգ է, որը կոչված է իրավունքի սուբյեկտների շահերի բավարարման ճանապարհին կանգնած խոչընդոտները հաղթահարելուն[4]:

Ամփոփելով վերոհիշյալ հարցադրման առնչությամբ մեր դատողությունները՝ անդրադառնանք նաև մեր հայրենակից Վ. Ս. Ներսեսյանցի կողմից տրված

---

[1] Տե՛ս **Ленчик В. А.**, նշվ. աշխ., էջ 12:

[2] Տե՛ս **Алексеев С. С**. Механизм правового регулирования в социалистическом государстве. Вестник гуманитарного университета, Автономная некоммерческая организация высшего образования, "Гуманитарный университет" (Екатеринбург), N 4 (27), 2019:

[3] Տե՛ս **Хропанюк В. Н**. Теория государства и права. М., 1995. էջ 341:

[4] Տե՛ս **Матузов Н.И. Малько А.В**. Теория государства и права. – М.: Юристъ, 2001, էջ 56:

բնորոշմանը, ով, հաշվի առնելով իրավունքի և օրենքի հարաբերակցության հիմնահարցը, առաջարկում է նոր հայացք նետել հասարակական կյանքի իրավական կարգավորման մեխանիզմի նպատակին: Հեղինակը բացատրում է, թե ինչ իրավական մեխանիզմներով և ինչպես է պետությունը կարգավորում սոցիալական հարաբերությունները[1]:

Վերոգրյալից կարելի է եզրահանգել, որ հասարակական հարաբերությունների վրա «իրավական ազդեցության մեխանիզմ» հասկացությունը ձևավորվում է «իրավունքի գործողության մեխանիզմ» և «իրավական կարգավորման մեխանիզմ» հասկացությունների համադրության միջոցով, իսկ, ընդհանուր առմամբ, կարելի է եզրակացնել, որ «մեխանիզմ» հասկացության էության վերլուծությունը, կապված իրավունքի գործունեության և սոցիալական հարաբերությունների իրավական կարգավորման հետ, թույլ է տալիս դիտարկել իրավական կոնվերգենցիայի մեխանիզմի էության առանձնահատկությունները:

Իրավական կոնվերգենցիայի մեխանիզմի տեսության և պրակտիկայի վերլուծությունը թույլ է տալիս փաստել, որ.

- Իրավական կոնվերգենցիայի մեխանիզմը սերտորեն կապված է «իրավունքի գործողության մեխանիզմի» և «իրավական կարգավորման մեխանիզմի» հետ և հիմնված է դրանց վրա:
- Ցանկացած իրավական և նույնիսկ ոչ իրավական միջոց, փաստ, որոնց օգնությամբ իրականացվում է կոնվերգենցիայով նկարագրված իրավական մերձեցումը, կարող են վերագրվել իրավական կոնվերգենցիայի մեխանիզմին:

Այսպիսով, իրավական կոնվերգենցիայի մեխանիզմը փոխկապակցված, փոխպայմանավորված ձևերի, միջոցների, մեթոդների, օբյեկտների, ինչպես նաև չափերի ամբողջություն է, որոնք ապահովում են իրավական կոնվերգենցիայի գործընթացը:

Իրավական կոնվերգենցիայի ձևերը, միջոցները և սկզբունքները իրավական կոնվերգենցիայի մեխանիզմի հիմնական տարրերից են, որոնք, լինելով ինքնուրույն և անկախ, անքակտելիորեն կապված են միմյանց, ուստի իրավական կոնվերգենցիայի մեխանիզմի ամբողջական ընկալման համար անհրաժեշտ է դիտարկել դրանք որոշակի եռամիասնության մեջ:

Օրենսդրության մեջ «ձև» բառը օգտագործվում է պայմանագրի տեսակը նշելու համար, ինչպես օրինակ՝ հարկային հաշվառման ձևը, հաշիվ-ապրանքագրի ձևը, վճարման ձևը, վարձատրության ձևը և այլն:

Հաճախ, երբ խոսքը վերաբերում է իրավական երևույթի ձևին, հարկ է ուշադրություն դարձնել այն փաստի վրա, որ «ձև» հասկացության հետևում միշտ կա ինչ-որ ամբողջական երևույթ՝ բացառությամբ ձևը որպես արտաքին արտահայտման միջոց (արտաքին ձև) հասկանալու դեպքի, և քանի որ իրավաբանական կոնվերգենցիան բնութագրվում է որպես իրավական երևույթ, հետևաբար այն ամենը, ինչը վերաբերում է իրավական երևույթների ձևին, բնորոշ է նաև իրավաբանական կոնվերգենցիային: Հաշվի առնելով վերոնշյալը՝ առանձնացնենք իրավաբանական կոնվերգենցիայի ձևի հիմնական առանձնահատկությունները:

Նախ՝ իրավաբանական կոնվերգենցիայի ձևը դրա բովանդակության՝ տարբեր իրավական օբյեկտների (երևույթների) մերձեցման գործընթացի արտացոլումն է:

---

[1] Տե՛ս **Нерсесянц В.С**. Общая теория нрава и государства. Учебник для юридических вузов и факультетов М.:Норма. -1999. - էջ 530 – 532:

Երկրորդ՝ իրավական կոնվերգենցիայի ձևը կախված է իրավական երևույթների մերձեցման գործընթացի տեսակից (օրենքի և իրավունքի մերձեցում, իրավունքի համակարգի տարրերի մերձեցում, օրենքի և սոցիալական այլ կարգավորիչների համակարգի մերձեցում, տարբեր պետությունների իրավական համակարգերի մերձեցում):

Այսպիսով, իրավաբանական կոնվերգենցիայի ձևը գլոբալ, ներհամակարգային և ենթահամակարգային մակարդակներում տարբեր իրավական մերձեցման գործընթացներից դուրս օբյեկտների (երևույթների) դրսևորումն ու արտահայտում է:

Չևի առանձին տարրերը երբեմն համարվում են որպես միջոցներ: Իրավական միջոցները (իրավաբանական միջոցները), ինչպես շատ իրավական հասկացություններ, ի սկզբանե ենթարկվել են վերլուծության ոլորտային մակարդակում, այն է՝ քաղաքացիական իրավունքի ոլորտում, որտեղ դրանք դիտարկվել են որպես սուբյեկտների կողմից համապատասխան խնդիրները լուծելու, դրանց նպատակներին (շահերին) հասնելու իրավաբանական միջոցներ[1]:

Իրավական միջոցների խնդիրը հիմնականում ներկայացվում է որպես ընդհանուր տեսական խնդիր: Ա. Վ. Մալկոյի կարծիքով, իրավական միջոցները ընդհանուր առմամբ իրավական երևույթներ են, որոնք արտահայտվում են գործիքներում (կանոնակարգերում) և ակտերում (տեխնոլոգիաներում), որոնց միջոցով բավարարվում են իրավունքի սուբյեկտների շահերը, ապահովվում է սոցիալական նպատակների իրականացումը[2]: Իրավական միջոցների տեսական և ոլորտային ուսումնասիրությունների վերլուծությունը թույլ է տալիս առանձնացնել դրանց առանձնահատկությունները.

1) հանդես են գալիս որպես իրավական հարաբերություններն ապահովելու, նշանակված նպատակներին հասնելու իրավաբանական մեթոդների ընդհանրացման ձև,

2) իրավունքի և պետության գործառույթների իրավական կարգավորման և իրականացման մեխանիզմի հիմնական տարրերից են,

3) առաջացնում են իրավական հետևանքներ՝ իրավահարաբերությունների հաստատման, փոփոխման կամ դադարեցման տեսքով, բնութագրում են իրավական կարգավորման արդյունավետության աստիճանը,

4) ապահովվում են պետական հարկադրանքով և դրանք օգտագործող սուբյեկտների ընտրությամբ:

Իրավական միջոցների բազմակողմանիությունը հնարավորություն է տալիս ունենալու բավականին մանրամասն դասակարգում: Դրանք սովորաբար առանձնանում են տարբեր հիմքերով: Օրինակ, ըստ բարդության աստիճանի՝ լինում են առաջնային (տարրական) և բարդ: Առաջինը ներառում է ամենապարզ և անբաժանելի կարգավորումները՝ սուբյեկտիվ իրավունքներ և իրավական պարտավորություններ, խրախուսանքներ և պատիժներ, արտոնություններ, արգելքներ և այլն:

Անդրադառնանք իրավական միջոցների դասակարգմանը՝ ըստ առանձին հիմքերի: Այսպես, կախված դերից՝ իրավական միջոցները բաժանվում են կարգավորող (թույլտվություններ) և պաշտպանիչ (պաշտպանության միջոցառումներ), ըստ իրավական կարգավորման առարկայի՝ սահմանադրական, վարչա-

[1] Տե՛ս **Пугинский Б. И.** Гражданско-правовые средства в хозяйственных отношениях. М., 1984, էջ 87:
[2] Տե՛ս **Малько А. В.** Նշվ. աշխ. էջ 66-77:

կան, քաղաքացիական, քրեական և այլն, ըստ բնույթի լինում են բովանդակային (առաջարկությունների) և ընթացակարգային (հայցադիմումի), ըստ հետևանքների նշանակության՝ սովորական (տուգանքային) և բացառիկ (մահապատիժ), ըստ վավերականության՝ մշտական և ժամանակավոր, ըստ իրավական կարգավորման տեսակի՝ նորմատիվային և անհատական՝ կախված տեղեկատվությունից, և ըստ հոգեբանական ուղղվածության՝ խթանող և սահմանափակող և այլն[1]:

Իհարկե, այս դասակարգումը կարելի է շարունակել, սակայն, հաշվի առնելով իրավական միջոցների վերլուծության շրջանակները, նպատակահարմար է սահմանել իրավական կոնվերգենցիայի միջոցների առանձնահատկությունների հայեցակարգը, որպիսիք են.

1) իրավական կոնվերգենցիայի որոշ միջոցներ իրավական են (օրենքի նորմեր, իրականացման ակտեր և այլն), մյուսները ոչ իրավական են (տնտեսական, քաղաքական և այլն),

2) արտացոլում են իրավական կոնվերգենցիայի սուբյեկտների կամքը (պետություն, պետական մարմիններ, պաշտոնատար անձինք),

3) իրավական կոնվերգենցիայի, իրավունքի և պետության գործառույթների իրականացման մեխանիզմի հիմնական տարրերից են,

4) գրավում են նոր իրավական իրավիճակներ ի դեմս կոնվերգենցիայի, գլոբալիզացիայի, իրավունքի համակարգվածության և այլնի, բնութագրում են իրավական համակարգի աստիճանը,

5) որպես իրավական կոնվերգենցիայի հիմնական միջոց՝ պետք է նշել իրավական նորմերը, իրավական ակտերը, կիրառման ակտերը, սոցիալական նորմերը, իրավաստեղծ գործունեությունը, օրենսդրության համակարգումը, տնտեսագիտությունը, քաղաքականությունը և իրավական կոնվերգենցիայի սկզբունքները:

Իրավաբանական կոնվերգենցիայի միջոցների ամբողջությունը կախված է իրավական կոնվերգենցիայի ձևից և պայմաններից, իսկ իրավաբանական կոնվերգենցիայի սկզբունքները կրում են համընդհանուր բնույթ:

Այսպիսով, *իրավական կոնվերգենցիայի միջոց* ասելով՝ պետք է հասկանալ իրավական և ոչ իրավական արտաքին երևույթները, որոնց միջոցով իրականացվում է իրավաբանական կոնվերգենցիայի գործընթացը, ապահովվում է իրավունքի կոնվերգենցիայի ձեռքբերումը:

Ամփոփելով վերը նշվածը՝ կարող ենք եզրակացնել.

1) իրավաբանական կոնվերգենցիայի ձևերը և միջոցները դրա մեխանիզմի առանցքային տարրերից են,

2) ձևերի և միջոցների բաժանումը դրսևորվում է իրավական կոնվերգենցիայի գործընթացներում ոչ միայն իրավական, այլ նաև ոչ իրավական (քաղաքական, տնտեսական և այլն) երևույթների օգնությամբ,

3) դիտարկվող տարրերը սերտորեն փոխկապակցված, ազդում են միմյանց վրա. օրինակ՝ պետական գործունեության ձևերից մեկը, որի միջոցով իրականացվում է իրավաբանական կոնվերգենցիան, իրավաստեղծ գործունեությունն է, այսինքն՝ վերջինս միևնույն ժամանակ իրավաբանական կոնվերգենցիայի միջոց է և առաջատար սկզբունք, որն արտահայտում է իրավաբանական կոնվերգենցիայի էությունը:

---

[1] Տե՛ս **Малько А. В.** Правовые средства: вопросы теории и практики, 1998, էջ 66-77:

СОВРЕМЕННЫЕ ТЕНДЕНЦИИ В ПРАВОВОЙ КОНВЕРГЕНЦИИ

Армен Асатрян
Доцент кафедры теории и истории государства и права ЕГУ, кандидат юридических наук

Конвергенция — одна из концепций западной общественной науки, считающей решающей чертой общественного развития тенденцию к сближению общественно-политических систем, преодолению экономических, политических и идеологических различий между капитализмом и социализмом, преследуя цель целью их дальнейшего слияния.

Современный этап развития правовых знаний предполагает, что многие особенности развития правовых систем не могут быть адекватно объяснены без введения нового для юридической науки понятия правовой экспансии.

Средствами правовой конвергенции являются выраженные внешние юридически-неправовые явления, посредством которых осуществляется процесс правовой конвергенции, обеспечивается достижение конвергенции права.

В общем, можно сделать вывод, что формы правовой конвергенции и средства являются одним из центральных элементов механизма правовой конвергенции, разделение средств выражается в процессах правовой конвергенции не только с помощью правовых явлений, но и с помощью неправовых (политических, экономических и т.п.) явлений и наконец наблюдаемые элементы тесно связаны друг с другом, взаимодействуют друг с другом, например, одной из форм государственной деятельности, посредством которой осуществляется правовая конвергенция, является законодательная деятельность, т. е. законодательная деятельность является одновременно средством правовой конвергенция, руководящий принцип, выражающий сущность правовой конвергенции.

CONTEMPORARY TRENDS IN LEGAL CONVERGENCE

Armen Asatryan
Docent at the YSU Chair Theory and History of State and Law, Candidate of Legal Sciences

Convergence is one of the concepts of Western social science, which considers the tendency towards convergence of socio-political systems, overcoming economic, political and ideological differences between capitalism and socialism, with the goal of their further merging, to be a decisive feature of social development.

The current stage in the development of legal knowledge suggests that many features of the development of legal systems cannot be adequately explained without introducing the concept of legal expansion, which is new for legal science.

The means of legal convergence are expressed external legal and non-legal phenomena, through which the process of legal convergence is carried out, the achievement of convergence of law is ensured.

In general, we can conclude that the forms of legal convergence and means are one of the central elements of the mechanism of legal convergence, the separation of means is expressed in the processes of legal convergence not only with the help of legal phenomena, but also with the help of non-legal (political, economic, etc.)) phenomena and finally the observable elements are closely related to each other, interact with each other, for example, one of the forms of state activity through which legal convergence is carried out is legislative activity, i.e. legislative activity is at the same time a means of legal convergence, a guiding principle, expressing the essence of legal convergence.

Բանալի բառեր – *իրավական համակարգերի մերձեցում, իրավաբանական կոնվերգենցիա, իրավունքի գործողություն, օրենսդրության համակարգում, իրավաստեղծ գործունեություն*
Ключевые слова: *сближение правовых систем, правовая конвергенция, действие права, систематизация права, законотворческая деятельность*
Keywords: *approximation of the legal system, legal convergence, law enforcement, systematization rights, legislative activity*